ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

28.05.2026

Սիրելի՛ հայրենակիցներ,

Շնորհավորում եմ բոլորիս Հանրապետության տոնի առթիվ:
Այս օրը մեր ինքնիշխանության, անկախ պետականության և սեփական հողի վրա ապագա կերտելու անբեկանելի իրավունքի գլխավոր խորհրդանիշն է:
Այսօր, առավել քան երբևէ, գիտակցում ենք, որ Հայաստանի Հանրապետությունը մեզ համար բացարձակ արժեք է, իսկ պետականության պահպանումն ու հզորացումը՝ քրտնաջան աշխատանք, ինստիտուտների կայացում և բարձր քաղաքացիական պատասխանատվություն:
Հարգելի՛ այունեցիներ, զարգացող տնտեսությամբ, պաշտպանունակ բանակով և ամուր սոցիալական հիմքերով պետություն կառուցելով՝ մենք ապահովում ենք մեր սերունդների խաղաղ և արժանապատիվ ապրելու տեսլականը:
Բայց այս օրը մեզ պարտավորեցնում է նաև հիշել, որ պետականությունը պարզապես տրված իրականություն չէ: Այն անընդհատ պետք է ամրապնդել՝ աշխատանքով, պատասխանատվությամբ, օրենքով, կրթությամբ և ազգային համախմբվածությամբ:
Եվ հենց Սյունիքում մարդիկ ամեն օր ապացուցում են, որ հայրենասիրությունը միայն խոսք չէ, այլ նաև իրական գործ, պատասխանատվություն և նվիրում:
Մաղթում եմ բոլորիս տոկունություն, անսասան կամք և միասնականություն, անդրդվելի հավատ մեր պետականության հանդեպ՝ հանուն ուժեղ, բարեկեցիկ և խաղաղ Հայաստանի Հանրապետության:
Թո՛ղ մեր հայրենիքում միշտ գերիշխեն օրենքը, արդարությունն ու առաջընթացը:
Շնորհավո՛ր Հանրապետության տոնը:
Կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը: